



## ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Շատ րոկամակներ են սրեղծվել փարքեր երկրներում, սակայն ջերմամիջուկային ռեակցիայի ինքնակայունություն և կառավարելիություն առայժմ չի հաջողվում իրականացնել: Այս ոլորտում ինտենսիվ ուսումնասիրություններ են կատարվում: 2010-ական թվականներին ծրագրվել է Ֆրանսիայում կառուցել փորձնական ջերմամիջուկային ռեակտոր: Սա միջազգային ծրագիր է և իրականացվում է 35 երկրների մասնակցությամբ: Այն կոչվում է ITER (International Thermonuclear Experimental Reactor), այսինքն՝ միջազգային ջերմամիջուկային փորձնական ռեակտոր: 2020 թվականից սկսվել է արդեն ռեակտորի կառուցումը (նկ. 1.8):

Այդ ռեակտորի արժեքը կկազմի մոտ 20 միլիարդ եվրո: Ենթադրվում է, որ կառուցումը ավարտին կհասցվի 2036 թվականին: Ռեակտորը կունենա 23.000 տոննա կշիռ, 70 մ բարձրություն: Տոկամակում ջերմաստիճանը ենթադրվում է, որ հնարավոր կլինի հասցնել մինչև 150 միլիոն աստիճանի: Իսկ պլազմայի շարժումը կառավարող մագնիսները պետք է սառեցվեն մինչև  $-269^{\circ}\text{C}$ : Այսպիսով՝ միջազգային այդ ռեակտորը կլինի մեր մոլորակի վրա ամենաբարձր և միաժամանակ ամենասառը վայրը: